

Արձանագրություն

«ՈՒԱԿ-ԷԱԾԾԶԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

գնահատող հանձնաժողովի նախագահ

/գլխ. հաշվապահ/ Շ. Անանյան

հանձնաժողովի անդամներ

/հաշվապահ/ Ն. Դավթյան

/հաշվապահ/ Ա. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հարություն Օհանյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված
«Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող
հանձնաժողովի նիստը համարվում է իրավագործ և հայտարարվում է բացված

Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահ Շ. Անանյան

1. Ընդունելի գիտություն որ՝

1.1 Գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Օհանյանը համաձայն՝ ՀՀ կառավարության 14 մայիսի 2017 թվականի թիվ 534-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգ»-ի /այսուհետ՝ Կարգ/ 19-րդ կետի և գնման ընթացակարգի իրավերի 1-ին մասի 7.10-րդ կետի պահանջներին կատարել է հարցում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ Կոմիտե/, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

2. Մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների համապատասխանության գնահատման մասին

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ և 59-րդ կետերի դրույթները և իրավերով սահմանված որակավորման պահանջները առկայությունը հիմնավորելու նպատակով Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի վերաբերյալ հանձնաժողովի անդամների տրված գնահատման թերթիկները (կցվում են). գնահատող հանձնաժողովը որոշեց

- Դավիթ Քոչարյան ԱԶ -ին մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:

- Հայկարի ՍՊԸ -ին մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:

- ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:

- Վարդան Մկրտչյան ԱԶ-ի մասնակցության իրավունքի և որակավորման պահանջները գնահատել բավարար:

Ընդունել որոշում՝ կողմ 3 (երեք) դեմ 0 (զրո) ձայներով

3 <<Դավիթ Քոչարյան>> Ա/Զ-ին 40-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու, <<Դավիթ Քոչարյան>> Ա/Զ-ին 40-րդ չափաբաժնի մասով հայտը մերժելու, ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ -ին 40-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին

3.1 <<Դավիթ Քոչարյան>> Ա/Ձ-ն իր 23.01.2019-ի գրությամբ հայտնել է, որ. <<Դավիթ Քոչարյան Ա.Ձ.-ն, «ՈՒԱԿ-ԷՎԾԾԲ-19/5» Ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ժամանակ թիվ 40 չափաբաժնի հայտը ներկայացնելիս թույլ է տվել սխալմունք. տեխնիկական բնութագրով նախատեսված 5 հատ A-3 թերթի փոխարեն ներկայացվել է 1 հատ A-3 թերթի արժեքով հայտ: (Ստացիորնար հիվանդի բժշկական քարտ, տետրակար, A3*5 խտությունը 70գ. մ/ք , 1+1):>>

4.2 Հաշվի առնելով <<Դավիթ Քոչարյան>> Ա/Ձ-ի վերը նշված գրությունները և ներկայացրած գնային առաջարկները գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը՝

համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի. <<1. (...): Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:>>, համաձայն ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝

<<40. Հայտերի բացման նիստում՝

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում (...) գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը (...) ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:>>, համաձայն սույն գնման ընթացակարգի հրավերի՝

5.2-րդ կետի. <<5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ (...)>>

7.4-րդ կետի. <<Աճուրդի ընթացքում (...): (...) գնային առաջարկները ներկայացվում են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որը հաշվարկվում է քանակ x միավորի գին բանաձևով:>>:

Վերը նշված նորմերից հետևում, եթե գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի պահանջներին ապա մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից ենթակա է մերժման:

Իսկ գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած գնային առաջարկը ըստ գնման ընթացակարգի հրավերի պահանջներին հարկավոր է ներկայացնել պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որի բանաձևը հետևյալն է՝ **գնման առարկայի քանակ x մասնակցի առաջարկված գնման առարկայի միավորի գին**: Հետևաբար եթե մասնակիցը իր ներկայացրած գնային առաջարկը կազմել և ներկայացրել է նշված բանաձևի խախտմամբ ապա այն գնահատող հանձնաժողովի կողմից պետք է գնահատվի անբավարար:

Այսինքն, եթե գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակիցը գնային առաջարկը ներկայացնի գնման առարկայի միավորի գնի համար և/կամ <<գնման առարկայի քանակ x մասնակցի առաջարկված գնման առարկայի միավորի գին>> բանաձևին անհամապատասխան, ապա գնահատող հանձնաժողովը այն պետք է գնահատի որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող և մերժի:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ <<Դավիթ Քոչարյան>> Ա/Ձ-ի 40-րդ չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկները չեն համապատասխանում գնման ընթացակարգի հրավերով սահմանված <<գնման առարկայի քանակ x մասնակցի առաջարկված գնման առարկայի միավորի գին>> բանաձևին, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- դադարեցնել <<Դավիթ Քոչարյան>> Ա/Ձ-ի 40-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցից ճաշելու մասին որոշումը,

- մերժել <<Դավիթ Քոչարյան>> Ա/Ձ-ի 40-րդ չափաբաժնի մասով ներկայացրած հայտը,

- 40-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցից ճանաչել ՀՀ ՊԵԿ «ՈՒսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին

Ընդունել որոշում՝ կողմ 3 (երեք) դեմ 0 (զրո) ձայներով

4 Ընտրված Մասնակցից ճանաչելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

5.1 Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ կայացրած որոշումը, մասնակիցների մասնակցության

իրավունքին, որակավորման ու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությանը հրավերի պահանջներին գնահատման թերթիկներով տրված գնահատականները, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց՝

կողմ 3 (երեք) դեմ 0 (զրո) ձայներով .

Գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել

- | | | |
|---|-------------------------------------|--|
| 1 | Դավիթ Քոչարյան ԱԶ -ին | 3-4-րդ, 8-րդ, 18-րդ և 38-րդ չափաբաժինների մասով |
| 2 | Հայկարի ՍՊԸ -ին | 32-34-րդ, 36-37-րդ և 39-րդ չափաբաժինների մասով |
| 3 | ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի | 7-րդ, 12-13-րդ, 16-րդ, 24-րդ, 22-23-րդ, 25-րդ, 35-րդ և 40-րդ չափաբաժինների մասով |
| 4 | Վարդան Մկրտչյան ԱԶ | 11-րդ, 14-րդ, 30-31-րդ և 41-րդ չափաբաժինի մասով |

Սույն կետում նշված չափաբաժինների համար Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանել 10 օրացույցային օր անգործության ժամկետ:

գնահատող հանձնաժողովի նախագահ

/գլխ. հաշվապահ/ Շ. Անանյան

հանձնաժողովի անդամներ

/հաշվապահ/ Ն. Դավթյան

/հաշվապահ/ Ա. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հարություն Օհանյան

